Հաստատում եմ՝

Դպրոցի տնօրեն Հ.Կարապետյան

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԴԱՍՂԵԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Արագածոտնի մարզի Դավթաշենի Ա. Վարդանյանի անվան
միջնակարգ դպրոցի
VI դասարան

Դասղեկ Վարդանուշ Ֆերոյան

2022-2023 ուս. տարի

ԿՐԹԱ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1.**ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ(դասարանի ընդհանուր բնութագիրը)** 6-րդ դասարանը բաղկացած է տասը աշակերտից՝վեց տղա և չորս աղջիկ: Դասարանն աչքի է ընկնում բարձր առաջադիմությամբ,անբասիր և օրինակելի վարքով, կարգապահությամբ: Սովորողները հատուկ հետաքրքրություն են դրսևորում ուսումնական պրոցեսի հանդեպ: Դասարանում բոլոր աշակերտները հանդուրժող են, համախմբված և ընկերասեր: Դասարանում չկան դժվար դաստիարակվող աշակերտներ:

2. **Ուսումնա-դաստիարակչական նախատեսվող աշխատանքները ուստարվա ընթացքում:** Ուսումնա-դաստիարակչական նպատակով պետք է հաճախակի հետևել դասարանի վարքին և ուսման առաջադիմությանը: Հրավիրել ծնողական ժողովներ, որոնք կնպաստեն աշակերտների ակտիվության բարձրացմանը: Դասից և վարքից անբավարար աշակերտների հետ աշխատել առանձին ,փորձելով շտկել այդ թերությունները: Աշակերտների մոտ ձևավորել բազմաբնույթ կարողություններ (կարգապահություն, մաքրություն, անձնական հիգիենա, համագործակցություն, փոխօգնություն) :

3. ՀԱՅԵՑԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

3.1 **Հոգևոր դաստիարակություն** : Այս նպատակով կազմակերպել էքսկուրսիա դեպի մոտակա հոգևոր մշակութային կենտրոններ: Աշակերտների մոտ սերմանել սեր և հարգանք քրիստոնեության նկատմամբ: Նույն նպատակով կատարել պատմական ակնարկ, որը կնպաստի հոգևոր դաստիարակության ձևավորմանը:

3.2 Գեղագիտական դաստիարակություն: Ֆիլմերի միջոցով ցուցադրել և բացատրել թե գեղեցիկը ինչ դեր ունի ներկայիս կյանքում: Բացի այդ լսել աշակերտների կարծիքը այդ նյութի վերաբերյալ: Կյանքից բերել օրինակներ և ձևավորել գեղագիտական ճաշակ:

3.3 Ռազմահայրենասիրական դաստիարակություն Հայրենասիրության կրթության վերաբերյալ կազմակերպել քննարկումներ: Նշել մի շարք ֆիդայիների անուներ և թվարկել այն բնավորության գծերը, որտեղ ակներև է հայրենասիրությունը և ռազմարվեստի ձևերը:

3.4 Ֆիզիկական դաստիարակություն Դասապրոցեսին պետք է ցուցաբերել ակտիվություն : Բացատրել և պահանջել , որ աշակերտները հետևեն իրենց ֆիզպատրաստությանը: Կոփեն իրենց մարմինները ֆիզվարժությունների և հնարների միջոցով:

3.5 Աշխատանքային դաստիարակություն Աշակերտների մոտ ձևավորել սեր դեպի աշխատանքը և աշխատավոր մարդը: Տալ աշակերտներին այն գաղափարը , որ կարողանա գոյատևել ներկայիս դժվար պայմաններում:

3.6 Բնապահպանական դաստիարակություն Պետք է կազմակերպել էքսկուրսիաներ դեպի բնության գիրկը և այդ ընթացքում թվարկել բնապահպանական մի քանի խնդիրներ, որոնք առկա են իրենց շրջապատում և այդ խնդիրը գլոբալ է:

4. Դպրոց-ընտանիք կապը Երեխաները պետք է հասկանան, որ ընտանիքը հանդիսանում է պետության կորիզը:Հաճախակի հրավիրել ծնողական ժողովներ, դասալսումներ ծնողների կողմից և միասին վերացնել թերությունները: Պահպանել ծնող- դասավանդող ուսուցիչներ կապը: Կարգավորել աշակերտների վարքը թե դպրոցում, թե դրսում:

ՈՒՍՈՒՄՆԱ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ուսումնական շաբաթներ	Ուսումնա-դաստիարակչական աշխատանքների բովանդակություն	կատարման ժամկետը	Կատարողներ
I	Դասարանական ակտիվի ընտրություն: Ծնողական խորհրդի ընտրություն: Նախորդ ուստարվա արդյունքների վերլուծում, նոր ուստարվա անելիքների ծրագրում:	5 սեպտեմբեր	աշակերտ դասղեկ
II	Զրույց :Ինչ պետք է անել օդային տագնապի դեպքում:	12 սեպտեմբեր	աշակերտ դասղեկ
III	Զրույց : Անկախությունը մեծագույն արժեք և նվաճում. ՀՀ պետական խորհրդանիշները:	19 սեպտեմբեր	աշակերտ դասղեկ
IV	Զրույց : <<Երկրագունդը բոլորիս տունն է>> :	26 սեպտեմբեր	աշակերտ դասղեկ
V	:<< Բնական պաշարներ >> թեմայով քննարկումը կձևավորի գիտելիքներ արդյունաբերության տարբեր ոլորտների վերաբերյալ	3 հոկտեմբեր	աշակերտ դասղեկ
VI	<< Ես էլ քեզ նման եմ >> թեմայով զրույցը հնարավորություն կտա ձևավորել հարգանք դիմացինի նկատմամբ:	10 հոկտեմբեր	աշակերտ դասղեկ
VII	<< Աշակերտների իրավունքները և պարտականությունները դպրոցում>> նպատակն է հստակեցնել աշակերտների	17 հոկտեմբեր	աշակերտ դասղեկ

	մոտ իրենց իրավունքները և պարտականությունները:		
VIII	Ովքեր են իմ ընկերները: Ինչն եմ կարևորում ընկերության մեջ:	31 հոկտեմբեր	աշակերտ դասղեկ
IX	Քաղաքավարություն ամեն օր /սովորում ենք քաղաքավարության կանոններ/: Լինենք ավելի բարեկիրթ ու էսթետ:	7 նոյեմբեր	աշակերտ դասղեկ
X	<< Պոլիեթիլենի տոպրակներն ու շրջակա միջավայրը>> տալ խնդրին լուծումներ:	14 նոյեմբեր	աշակերտ դասղեկ
XI	Համակարգիչն ընկեր է, թե թշնամի: Մեդիագրագիտություն /պաշտպանություն և անվտանգություն/, համակարգչային խաղերի բացասական հետևանքները վարքի վրա:	21 նոյեմբեր	աշակերտ դասղեկ
XII	<< Կարող եմ օգտակար լինել >> թեման հնարավորություն կտա աշակերտների մոտ ձևավորել բարի և դրական հատկանիշներ:	28 նոյեմբեր	աշակերտ դասղեկ
XIII	<< Բնական աղետներ >> ներկայացնել բնական աղետների առաջացման պատճառները և դրանց հետևանքները:	5 Դեկտեմբեր	աշակերտ դասղեկ
XIV	Տվյալ բնակավայրում, տարածքում հնարավոր բնական աղետները: Անհրաժեշտ գիտելիքներ երկրաշարժից պաշտպանվելու համար: Ծնողական ժողով	12 դեկտեմբեր	աշակերտ դասղեկ
XV	<< Ամանոր կամ Նոր տարի>> համադպրոցական միջոցառման նախապատրաստում:	19 դեկտեմբեր	աշակերտ դասղեկ կազմակերպիչ
XVI	Առաջին կիսամյակի արդյունքների ամփոփում: << Եկեղեցին և ազգը >> քննարկման միջոցով աշակերտների մոտ հիմնավորել եկեղեցու դերը հայ իրականության և հայ ժողովրդի կյանքում:	9 հունվար	աշակերտ դասղեկ
XVII	<< Ազգ և պետություն >> թեմայով բաց քննարկում և վերլուծություն:	16 հունվար	աշակերտ դասղեկ
XVIII	Հայոց բանակը 31 տարեկան է: Հերոս տղերքը մեր...	23 հունվար	աշակերտ դասղեկ
XIX	<< Քաղաքացիական ինքնություն >> կիմանան ինչ է քաղաքացիական ինքնությունը կհասկանան թե քաղաքացի լինելն ինչքանով է առնչվում իրենց հետ	30 հունվար	աշակերտ դասղեկ

XX	<< Պատասխանատու քաղաքացի >>	6	աշակերտ
	աշակերտները այս թեմայի ուսումնասիրելուց հետո կիմանան թե ինչպես պետք է լինի ցանկացած քաղաքացի:	փետրվար	դասղեկ
XXI	<< Տյառնընդառաջ >> համադպրոցական միջոցառման նախապատրաստում : Ծնողական ժողով	13 փետրվար	աշակերտ դասղեկ կազմակեր պիչ
XXII	<< Սպառողների իրավունքներ >> ներկայացնել և ձևավորել իրենց իրավունքները , որպես սպառողներ:	20 փետրվար	աշակերտ դասղեկ
XXIII	<< Ինչպես վարվել աղբի հետ >> օգնել սովորողներին գիտակցելու աղբի և թափոնների վնասակար ազդեցությունը բնության և մարդու առողջության վրա:	27 Փետրվար	աշակերտ դասղեկ
XXIV	Կանանց միջազգային օր: Մոր կերպարը:	6 մարտ	աշակերտ դասղեկ
XXV	Մեր վատ սովորությունները և պայքարը դրանց դեմ: Անձնական հիգիենա և առողջ սնունդ. ինչու է այն կարևոր հատկապես այս տարիքում	13 մարտ	աշակերտ դասղեկ
XXVI	<< Ինչու է պետք ներառումը >> աշակերտների մոտ ձևավորել հանդուրժողական վերաբերմունք հատուկ կարիքավոր մարդկանց նկատմամբ	20 մարտ	աշակերտ դասղեկ
XXVII	<< Նախապաշարումների ոստայն >> ներկայացնել , թե ինչպես է զգում նախապաշարմունքի և կարծրատիպերի զոհ դարձած մարդը: Իրավիճակը հաղթահարելու ուղիներ որոնել	3 ապրիլ	աշակերտ դասղեկ
XXVIII	Էքսկուրսիա՝ Հայաստանի հոգևոր պատմամշակութային կենտրոն:	10 ապրիլ	աշակերտ դասղեկ
XXIX	<< Պետք է արդյոք, խնայել >> խթանելով աշակերտների ստեղծագործական մտածողությունը ձևավորել բնության և բնական պաշարների հանդեպ խնայող վերաբերմունք	17 ապրիլ	աշակերտ դասղեկ
XXX	<< Հայոց Մեծ եղեռն >> աշակերտներին ներկայացնել թուրքերի կատարած ոճրագործությունը : Նրանց մոտ սերմանել հայրենասիրություն:	24 ապրիլ	աշակերտ դասղեկ

XXXI	<< Ասացվածքի ամբիոն >> աշակերտներին ծանոթացնել ժողովրդական բանահյուսության մի տեսակին՝ ասացվածքին և նրանց մեջ զարգացնել բարոյական արժեքներ մարդկանց	8 մայիս	աշակերտ դասղեկ
	նկատմամբ հարգանք մարդասիրություն:		
XXXII	<<Ազգային զարթոնք>> ներկայացնել հայերի մասնակցությունը մի շարք մարտական գործողություններին: Նպատակն է աշակերտների մոտ ձևավորել ազգային գիտակցության արժեհամակարգ:	15 մայիս	աշակերտ դասղեկ
XXXIII	Երկրորդ կիսամյակի արդյունքների ամփոփում: Ամառային արձակուրդին երեխաների հանգստի և ժամանցի մասին: Ծնողական ժողով	22 մայիս	աշակերտ դասղեկ

ԴԱՍՂԵԿԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԹԵՄԱՏԻԿԱ

Անցկացման օրը	Դասղեկի անցկացրած միջոցառման (դասախոսություն, զրույցներ, դիտողական արշավներ, էքսկուրսիաներ և այլն) բովանդակությունը	ծանոթություն
19.09.22 թ.	Դասախոսություն Հայաստանի երրորդ հանրապետության մասին	
03.10.22թ.	Զրույց բնապահպանական խնդիրների շուրջ	
21.11.22 թ.	Դասախոսություն Մեդիագրագիտություն: Համակարգչային խաղերի բացասական հետևանքները երեխաների վարքի վրա	
19.12.22թ.	<< Ամանոր կամ Նոր տարի>> համադպրոցական միջոցառում	
23.01.23 թ.	Դասախոսություն և ֆիլմի դիտում Հայոց բանակ թեմայով	
13.02.23 թ.	Համադպրոցական միջոցառում << Տյառնընդառաջ >> տոնի կապակցությամբ	
06.03.23 թ.	Մայրության տոն թեմայով քննարկում	
10.04.23թ.	Էքսկուրսիա՝ Հայաստանի հոգևոր պատմամշակութային կենտրոն:	
15.05.23 թ.	Հաղթանակ և պարտություն թեմայով դասախուսություն	